

Տ. ՆԱԿՈՒՐ ԱՐԵՂԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

Նայ Եկեղեցու վավերագրական ժառանգության մեջ իրենց ուրույն տեղն ունեն կաթողիկոսական կոնդակները, որոնք մինչ այսօր գրեթե ուսումնասիրված չեն, մինչդեռ հեղինակության հարուստ նյութ են պարունակում ոչ միայն բանասիրության, այլ նաև եկեղեցական իրավագիտության և Եկեղեցու պարմության խնդիրների բացահայտման ու պարզաբանման համար:

Բանասիրության համար կաթողիկոսական կոնդակները հեղինակություն են ներկայացնում, քանի որ կարող են էական ներդրում ունենալ պարմաբանասիրական, լեզվաբանական, տեսական վավերագրական բազմաթիվ հարցերի լուսաբանման գործում, քանզի հանդիսանալով հայ վավերագրության մի բաժինը՝ կոնդակներն ունեն առանձնահատուկ կառուցվածք, առանձնահատուկ ոճ, գեղարվեստական-շարադրական ձևաբանություն, և միաժամանակ պահպանում են սերտ աղերսներ հայրկապես սուրբգրական ու հունական թղթագրական և մասնավոր կերպով վավերագրական ժառանգությանը հետ: Բացի այս, կոնդակագրությունը, որպես առանձին ժանրային միավոր, բավական հեղափոխիչ է իր անցած ուղիով, քանզի ժամանակներում կրած ազդեցություններով, ձևավորած ավանդույթներով:

Եկեղեցական իրավագիտության համար կաթողիկոսական կոնդակները կարևորվում են նախ և առաջ որպես իրավական (հաճախ նաև կանոնական) գործություն ունեցող փաստաթղթեր, որոնք հիմնականում արարացում են հայոց հայրապետների իրավական գործողություն-սրբիությունները, իրենց վստահված հոգին հղած պարզամ-ուղերձները, որոնք հաճախ ունեն խորը կանոնական արմատներ: Միով բանիվ, եկեղեցական իրավագիտությունը կաթողիկոսական կոնդակների ուսումնասիրությամբ կարող է էապես լույս սփռել հայ եկեղեցական կանոնադրական մարմինների գործունեության, ձևավորած մտայնությունների ու ժառանգության վրա՝ միաժամանակ կանոնադրական տեսանկյունից հիմնավորելով հայոց հայրապետների գործողությունները և համապարփակ պարկերացում քաղ վերջիններիս գործունեության դաշտի, իրավասությանը սահմանների մասին:

Եւ վերջապես, եկեղեցական պարմագրության համար կաթողիկոսական կոնդակները կարևոր սկզբնաղբյուրներ են:

Նայ բանասիրությունը քաղիների ընթացքում համարվել է կոնդակի ուսումնասիրությանը նվիրված քաղերը աշխարհություններով: Այս առումով կարևոր են Գյուր ավագ քահանա Աղանյանցի «Դիւան Նայոց պարմութեան» շարքը /գիրք Ա-ԺԳ. Թիֆլիս, 1893-1917/, Վարդան Գրիգորյանի «Դիւան Նայոց պարմութեան» (նոր շարք) ժողովածուն, /Երևան 1984 թ./ Ս. Բեքոյանի «Վավերագրեր Նայ Եկեղեցու պարմութեան» քանիսիգհարդրակը /գիրք Ա-ԺԵ, Երևան, 1994-2006 թթ/: Մասնակի բնագրային հրապարակություններ կարարել են Խ. Տեր-Գրիգորյանը՝ «Դիւան Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի» /Անթիլիաս-Լիբանան 2003թ./, Կ.

Բաժնաճյանը՝ «Միոն» ամսագրի 1930-1940-ական թթ. համարներում անդրադառնալով Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի որոշ կոնդակներին, ևս այլը:

Հայերենում «կոնդակ» բառը համապատասխանում է հունարեն *kondakion* և լատիներեն *contagium* բառերին¹: Միջնադարում բառն ունեցել է «համառոտ երգ», «հորդորակ» իմաստները², Հայոց մեջ նշանակել է՝ «մագաղաթյա փաթույթ», «թուղթ» (նամակ, ուղերձ), «Հայրապետական գիր», «հիշատակագիր» և նույնիսկ՝ կրակ³: Իբրև Հայրապետական գիր, ուղերձ՝ համարժեք է հունարեն *epistole*-ին, լատիներեն *epistola*-ին ու *littera*-ին, որոնք համապատասխանաբար նշանակում են հրովարդակ, նամակ, ուղերձ⁴: Նշյալ համարժեքներն իրենց հերթին ստուգաբանվում են որպես ողջույնի գիր, պաշտոնական ուղերձ և՛ աշխարհական, և՛ կրոնական բնույթի (նաև կոնդակ), որով կարծես եզրափակվում է եզրի իմաստային շրջանակը⁵:

Իբ «Հայերեն արմատական բառարանում» Հր. Աճառյանը անդրադարձել է սույն բառի բացատրությանն ու ստուգաբանությանը: Բացատրական մասում ընդհանուր առմամբ համաձայնելով Նոր Հայկազյան բառարանի հետ՝ Աճառյանն անդրադարձել է նաև բառի ծագումնաբանությանը՝ նշելով, որ բառն առաջացել է հունարեն *kondaz* (=kondak) բառից, որ նշանակում է գավազան, ձող, մական⁶: Հունական միջավայրում բառն օգտագործել են Սյրեփանոս փիլիսոփան (Է դ.) և Արսենոս Հռոմբը, իսկ առաջին անգամ կիրառել է Արիստոփանի իր «Կոմենարիաներում», ինչպես հաղորդում է «Greek-English Lexicon» բառարանը⁷: Ընդ որում նշյալ հեղինակները բառն օգտագործել են «ճառ» (անգլ. *essay*) իմաստով⁸: Նոր հունարենը *kondakion*-ի «մական», «գավազան» իմաստային փոփոխություններից ձևավորել է նոր իմաստային փոփոխություն՝ «հրացանի կոթ», որն էլ փոխառել է թուրքերենը՝ վերածելով «ղոնփաղ» արմատի (նույնն է իմաստով նոր հունարենի հետ)⁹:

Սյր. Մալխասյանցն էլ իր հերթին «Հայերեն բացատրական բառարանում» գրեթե կրկնում է նախորդ երկու բառարանների բացատրությունները՝ իր կողմից ավելացնելով հետևյալ իմաստային նրբերանգները՝ Կաթողիկոսական անդրանիկ շրջափռական թուղթ-ուղերձ և նաև նշանավոր մենաստանի փոխադրանքի օրինության գիրը¹⁰:

1 Տե՛ս. «Նոր Բաղդիք Հայկազյան լեզուի», Վենետիկ, 1836, հ. Ա., էջ 1115 (Ներայտո՝ ՆՏԸ):

2 Տե՛ս անդ:

3 Տե՛ս անդ:

4 Տե՛ս անդ, էջ 558, 821:

5 Տե՛ս անդ, հ. Բ., Վենետիկ, 1836, էջ 143:

6 Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ., Երևան, 1973, էջ 632-633: Աճառյանի կարծիքով հունարենից է փոխառված նաև վրացերեն «կոնդակի» բառը, որ ունի ծխական իմաստ՝ նշանակում է մաղաթը հանուն սրբոց և արձանագրված է վրաց Պապարագամությունում, ասորերեն *qondaqa* և ռուսերեն *кондакъ* բառերը (վերջինը նշանակում է Ձոն (կամ Տաղ) հանուն Ս. Աստվածածնի) (անդ):

7 Տե՛ս Liddel and Scott, Greek-English Lexicon, London, 200, pp41-42:

8 Տե՛ս անդ:

9 Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Երևան 1979, էջ 137:

10 Տե՛ս Սյրեփանոս Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. II, Երևան, 1944, էջ 467: Այսպես հարկ ենք համարում մասնավոր կերպով անդրադառնալ Մալխասյանցի մեքսիկական իմաստային երկու նրբերանգներից առաջինին. փաստորեն Կոնդակը նաև Կաթողիկոսական ընդհանրական գրությունն է. քանզի «Շրջափռական» բառահոգվածում վերջինս պալիս է հետևյալ բացատրությունը՝ «Ընդհանրական, բոլորին ուղղված» (Տե՛ս նույն բառարան, հատոր III, էջ 543): Այսպես արդեն կոնդակը, իբրև իրավական ուժ ունեցող պաշտոնական վավերագիր, որոշակիորեն աղերսվում է թագավորական հրովարդակներին, որոնք պարզ նամակ, գրություն լինելուց զար, նաև պաշտոնական վավերագրեր են, հիմնականում հրամանագրեր, ծանուցումներ,

Ընդհանրացնելով նախորդ բառարանների բացատրություններն ու ստուգաբանությունները՝ Էդ. Աղայանը կատարում է հերելյալ եզրակացությանը. կոնդակը կաթողիկոսական պաշտոնական գրությունն է¹¹:

Այսպիսով՝ ամփոփելով մինչ այժմ կատարած բառագիտական-եզրաբանական ուսումնասիրությունը՝ արձանագրենք, որ Կոնդակն այսօրվա իմաստային նշանակությամբ Նայ Առաքելական Սուրբ Եկեղեցու գերագույն եկեղեցական նվիրապետի՝ Ամենայն Նայոց Կաթողիկոս - Ծայրագույն Պապրիարքի պաշտոնական գրությունն է, հրամանագիրը, ուղերձը հավաքացյալ ժողովրդին ու համայն հայությանը, կամքի արտահայտման իրավա-փաստաթղթային միջոցը, որը կարող է ունենալ տարբեր բովանդակություն և հրապարակվել ամենափոքրից առիթներով¹²:

Այժմյան պաշտոնական վավերագիր իմաստով «կոնդակ» եզրին համապատասխանում են լատիներեն *bullo* և *breve* եզրերը¹³: Այս երկու եզրերն էլ այսօր կիրառվում են Նոմնադական Կաթողիկ Եկեղեցում, ընդ որում սրանք կոնդակի տարաբնույթի երկու խումբն են ընդամենը¹⁴: Ընդհանուր առմամբ Պապական հրովարտականությունը կոչվել է կոչվում են «Constitutions» («որոշում»)՝ նմանողությամբ հռոմեական և ապա նաև բյուզանդական կայսերական հրովարտականների¹⁵:

«Բուլլա» բառն իր բուն իմաստով նշանակում է կնիք. այն կնիքը, որը սկսած VI դարավերջից դառնում էին ոսկու, արծաթի կամ գնդուսի վրա ու կցում փաստաթղթին¹⁶: Այդպիսի փաստաթղթերը կոչվում են «scripta quae sigillis bullata» («կնքյալ գրություն»-լատ.): Այսպիսից էլ ծագում է եզրի անունը որպես մասնավոր հատուկ անուն Պապական հրովարտականների այս տարաբնույթի¹⁷:

Հնդիսաբանությունների վկայություններ են այն (այս մասին առավել մանրամասն տե՛ս Ս. Մալխասեանց, նշվ. բառարան, հատոր III, էջ 543, **Էդուարդ Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. Ա, Երևան, 1976, էջ 909):

11 Տե՛ս **Էդուարդ Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. I, Երև., 1976, էջ 755: Էդ. Աղայանը ես անդրադարձել է «Չրջաբերական» եզրին՝ իր կողմից ավելացնելով հերելյալ իմաստային նրբերանգր. Չրջաբերականը հրահանգավորող գրություն է, կարգադրություն՝ ուղղված ստորադաս հիմնարկություններին կամ պաշտոնատար անձանց (տե՛ս **Էդ. Աղայան**, նշվ. բառարան, հատոր II, էջ 365): Սրանով եզրը կիրառություն է ստանում նաև այժմյան պաշտոնական գրագրության մեջ և այսօր էլ մնում է գրասենյակային լեզվի մեջ:

12 Ներառքրական է նաև հերելյալ պարագան. Ա. Սուրխայանն իր «Նայոց լեզվի հոմանիշների բառարանում» յուրօրինակ ամփոփում է կատարել՝ «կոնդակ» բառահոդվածում հոմանիշներ գնելով՝ հորոքրակ, հիշարակագիր, կաթողիկոսի գիր, վուլ (պապի) բառերը (Տե՛ս՝ **Աշոտ Սուրխայան**, Նայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967, էջ 334):

13 Տե՛ս **Владислав протоиерей Цыпин**, Курс Церковного права, Клин 2002, стр.159 (հեղաշյու՝ В. Цыпин):

14 Տե՛ս անդ:

15 Վաղիսյալ քին. Ցիպինը, անդրադառնալով այս հարցին, ենթադրում է, որ լույ եզրաբանական նմանողություն չէ սա, այլ ավելի շար կապված է Արեմտարքիստոնեական աշխարհում Նոմի Պապի ունեցած բացառիկ հեղինակության ու իշխանության հետ: Տե՛ս **В. Цыпин**, էջ. 159-160: Նույն տեսակետն են արտահայտել նաև Ա. Սուվորովը, Պ. Գորցակովը, Ի. Բերդնիկովը: Եվ իրապես Պապը քրիստոնյան Արեմտարքում հարկապես 1054 թ. Մեծ Սխիզմայից հետո ուներ բացարձակ, գերագույն և լիիրավ օրենսդրի ու միապետի կարգավիճակ ինչպես կրոնա-եկեղեցական, այնպես էլ աշխարհիկ գործերում՝ մի տեսակ գերագահը հանդիսանալով աշխարհիկ միապետների համար: (Այս մասին առավել մանրամասն տե՛ս՝ В. Цыпин, էջ 395-397, **А. Суворов**, Учебник Церковного права, Ярославль, 1898, стр. 42-59, 65-68 (հեղաշյու՝ А. Суворов), **И. Бердников**, Краткий курс Церковного права, Казань. 1888, стр. 30-35 (հեղաշյու՝ И. Бердников), **П. Тордаков**, лекции Церковного права, СПб 1888/9, стр. 305-313.)

16 Տե՛ս՝ **В. Цыпин**, էջ. 160.

17 Տե՛ս անդ:

Սովորաբար պապական հրովարտական այս փառաբանակը կնքելիս օգտագործում են գմուռսե կնիք մի կողմից Պողոս և Պետրոս առաքյալների պարկերներով, իսկ մյուս կողմից օրվա Սրբազան Քահանայապետի անվան փորագրությամբ: Բուլլաները սովորաբար գրվում են հասարակ գույնի մագաղաթի վրա լատիներենով, ընդ որում բացակայում են գլխագրերն ու կերպարական նշանները¹⁸: Առաջին բառը սովորաբար պապի անունն էր՝ առանց գավազանագրքում ունեցած անվանահամարի և «episcopus servus servorum dei» (լատ.՝ «եպիսկոպոս, ծառայից ծառա Աստուծո») պատվարկությունը¹⁹:

Համայն Կաթոլիկ Եկեղեցուն կամ ողջ եպիսկոպոսաց դասին ուղղված բուլլաները կոչվում էին «*bulle enciclica*» («շրջաբերական բուլլաներ») կամ պարզապես՝ «*enciclica*»²⁰: Էնցիկլիկաները, ինչպես և բուլլաները, եթե որևէ հրահանգ են պարունակում, ապա, իբրև բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող փաստաթղթեր, ենթակա են անվերապահ կատարման, առանց քննության: Բարձրագույն եկեղեցական պաշտոնների նշանակումը ևս կատարվում է բուլլայով: Բուլլաները, այդ թվում նաև Էնցիկլիկաները, ունեն իրենց անունները, որոնք համապատասխանում են պապի անվանը հաջորդած առաջին բառերին²¹:

Առավել նվազ հանդիսավոր կամ նվազ կարևոր առիթներին հրապարակվում է *breve*-ն (համառոտ վավերագիրը), որը գրվում է սպիտակ բարակ մագաղաթի վրա լատիներենով կամ իտալերենով, ունի գլխագիր, պապի անվանահամարը անունից հետո և փորդոսացանկը²²: Բրեւեն կնքվում է կարմիր գմուռսե կնիքով: Կնիքի վրա կա Պետրոս առաքյալի պարկերը ձկնորսական նավակով, ձեռքին բանալի և գրություն՝ «*anulus piscatois*» (լատ.՝ «ձկնորսական մատանի »): Բուլլաներից ու բրեւեններից բացի կա նաև պապական վավերագրի մեկ այլ տիպ, որ կոչվում է *regular cancellariae apostolicae* (լատ.՝ «առաքելական գրասենյակի կանոններ»): Սրանք հրահանգներ են, որոնք նորընտիր պապը գահ բարձրանալով հրապարակում է պապական կուրիայի ու կենտրոնական եկեղեցավարչական հաստատությունների համար²³: Մինչև ժԵ դար յուրաքանչյուր նոր պապ գահ բարձրանալով, իր քահանայապետական ընթացքի համար հրապարակում էր նոր կանոններ: ԺԵ դարից սկսյալ յուրաքանչյուր նոր պապ, գահ բարձրանալով, հաստատում է նախորդի վավերացրած կանոնները և վերահրապարակում իր անունից²⁴:

Պապական հրովարտականների վերջին տեսակը լատ. *literae apostolicae simplices* («պարզ առաքելական գրություններ») կոչված վավերագրերն են, որոնք պապի անունից հրապարակվում է պապական կուրիայի հաստատությունների կողմից:

Բոլոր պապական հրովարտականները, եթե մասնավոր հասցեատեր չունեն, ապա

18 Տե՛ս անդ, էջ. 161:

19 Տե՛ս անդ:

20 Տե՛ս «Советская историческая Энциклопедия», т. XVI, М, 1976, էջ 535-536:

21 Տե՛ս **В. Цыпин**, էջ 161:

22 Տե՛ս անդ:

23 Տե՛ս **В. Цыпин**, էջ 162:

24 Տե՛ս անդ:

քաղաքում նաև եկեղեցական պաշտոնական վավերագրերի ձեւավորման ու հրապարակման ավանդույթի վրա²⁹: Բյուզանդական միջավայրում՝ նաև կրոնա-եկեղեցական բնույթի պաշտոնական վավերագիրը բարձրագույն իրավական ուժ էր համակայսերական բնույթ էր ստանում կայսեր վավերացումից հետո միայն³⁰: Պոլսի պարբիարքը, որ նույն Կ. Պոլսի արքեպիսկոպոսն էր, միայն Քաղկեդոնի ժողովի 28-րդ կանոնով բարձրացավ պարբիարքության շարքում և ներառվում էր կայսրին և կախված էր նրանից, ուստիև ստիպված էր համակերպողական դիրքորոշում ունենալ³¹:

Անշուշտ, քաղաքությունը չպիտի սրբեցվի, թե Կ. Պոլսի պարբիարքները ընդամենը կամակարար էին կայսրերի ձեռքին, բայց և, չպիտի անտեսվի բյուզանդական կայսրությունում առկա՝ պետություն-Եկեղեցի համաձուլվածական մոդելը՝ ի գլուխ ունենալով կայսրին:

Անշուշտ, եթե անդրադառնանք Կ. Պոլսի պարբիարքական պաշտոնական ուղերձներին ու կոնդակներին գրական ժանրի առումով, պիտի նշենք, որ վերջինս ծագում է Բյուզանդական Էպիսկոպյար (նամակագրական) ժանրից, որն էլ իր հերթին ձեւավորվել է անտիկ հունական և մերձավորարևելյան ավանդույթների հիմքի վրա³²:

Եւ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցում պապական հրովարակների և Կ. Պոլսի պարբիարքական հրովարակների առումով պիտի արձանագրել հետևյալը. հիմնասյունը քրիստոնեական Ս. Գիրքն է՝ Աստվածաշունչ Մատթայնը, հապկապես Նոր Կտակարանում Պողոսի և մյուս առաքյալների նամակները: Սրանք և բովանդակային և ձևակառուցվածքային առումով ուղենիշ էին բոլոր քրիստոնեական Եկեղեցիների համար (ներառյալ նաև Հայ Եկեղեցու):

Ինչպես արդեն նշել եինք վերևում, Կոնդակն իր այժմյան իմաստով Ամենայն

որոնք վավերական են բոլոր Եկեղեցիների համար, հրավիրվել են կայսեր անմիջական գլխավորությամբ կամ մասնակցությամբ: Նույնիսկ ժողովական դավանական կամ ոչ դավանական հարցերում նկատելի է կայսեր ազդեցությունը: Քաղկեդոնի ժողովում արդեն նկատելի է ոչ միայն կայսեր, այլ նաև նրա անմիջական շրջապատի մասնակցությունն ու ազդեցությունը: Քաղկեդոնը, սակայն ուներ որոշ առանձնահատկություն. եթե նախորդ երեք ժողովներում պահպանվում էր նվիրապետական 4 նախաթռոնների հավասարության «սուրբութւն-քվին», ապա Քաղկեդոնում կայսրը ուղղակի բարձրացնում էր Կ. Պոլսի Աթոռի դիրքը՝ իբրեւ հինգերորդ Պարբիարքական Աթոռի և նաև որպես գերագահ Աթոռի որպես կայսերանիստ մայրաքաղաքի նվիրապետական կենտրոնի: Սա մեր կարծիքով արհեստականացված կարգավիճակի բարձրացում էր, և նպատակը հավանաբար կայսրին հպարտակ միասնական նվիրապետական կենտրոն ունենալն էր, քանզի կայսրը նաև Եկեղեցու գլուխն էր համարվում և նույնիսկ կայսերական հանդերձանքը քահանայական զգեստավորում էր հիշեցնում: Քաղկեդոնից հետո էլ կայսրերը մասնակցում էին երկրի կրոնաեկեղեցական կյանքին և նույնիսկ պետական արարքին քաղաքականությունը պայմանավորում եկեղեցա-դավանական հարցերով: [Տե՛ս "История Византии", М, 1967, стр.131-133, 154-155, 267-281]

29 Տե՛ս "Культура Византии", том I, Москва, 1984, стр.98-109. /Գ. Կուրբապովի հոդվածը/: Այսպես հիմնականում ներկայացված է բյուզանդական պետական մրավորության փիլիսոփայությունը, որը լիովին կայսերակենտրոն լինելով իր էությանը, համապարասխանում է մեր մոլորեցումներին:

30 Տե՛ս "Культура Византии", том I, стр.112, том II, стр.65-67, том III, стр.261-263, նաև И.П. Мевелев, Правовая культура Византийской Истории, СПб.2001, стр.283-302.

31 Կ. Պոլսի պարբիարքի իրավական կարգավիճակի Քաղկեդոնի 28-րդ կանոնի որոշման մասին փնտռելու համար տե՛ս Деяния Вселенских Соборов, том IV, էջ 214

32 Տե՛ս "Византийская литература", Л.1984 ժողովածու, Մ. Պոպովայի հոդվածը՝ էջ 181-182 (ներառյալ՝ Византийская литература):

Նայոց Կաթողիկոսի հրովարտական է, պաշտոնական գրությունը, հրամանագիրը, ուղերձը ժողովրդին: Սակայն սրան գուցահեռ Նայ Եկեղեցու պատմությունը պահպանել է բազմաթիվ վավերագրեր, որոնք իրենց տեսակով կոնդակ են, բայց գրվել են Մեծի Տանն Կիլիկիո և Աղթամարի կաթողիկոսների, Երուսաղեմի ու Կ. Պոլսի Նայոց պարբիարքների, նույնիսկ առանձին եպիսկոպոսների կողմից: Սա առաջ է բերում որոշակի հակասություն: Մեր կարծիքով, ինչպես որ պատմականորեն ապացուցված ճշմարտություն էր, իր բուն իմաստով կոնդակ են միայն Ամենայն Նայոց Կաթողիկոսի պարբիարքների պաշտոնական վավերագրերը. քանզի Ամենայն Նայոց Կաթողիկոսը եկեղեցավարչական ու եկեղեցախրավական ու կանոնական առումով իբրև գլուխ Նայ Առաքելական Ս. Եկեղեցու, գերագահ է մնացյալ նվիրապետների նկատմամբ ու իշխանություն ունի մնացյալների վրա³³: Տանն Կիլիկիո կաթողիկոսների կոնդակները, ինչպես և մնացյալ նվիրապետներին, բացառությամբ Աղթամարի Աթոռի գահակալներին, մասնավոր հովվական հրովարտակ-վավերագրեր են, որոնք իրավական ուժ ունեն միայն իրենց տարածքում³⁴: Աղթամարի Աթոռի պարագային, խնդիրը մի փոքր ավելի խճճված է ու բարդ: Իր գոյության առաջին օրվանից Աղթամարի Նայոց Կաթողիկոսությունը եղել է ինքնակոչ հակաթոռություն՝ հեղեղաբար այս Աթոռի գահակալների պաշտոնական հրովարտականները իրավականորեն կանոնադրված կոնդակ դիտել հնարավոր է միայն խիստ վերապահություններով: Սա սակայն չպիտի փակափակություն ստեղծի, որ Աղթամարի Աթոռի Կաթողիկոսական կոնդակները չունեն պատմամշակութային արժեք: Ամեն դեպքում, դրանք մեր եկեղեցական մատենագրության ու վավերագրական ժառանգության մի մասն են, այլ նաև ընդհանրապես պիտի գուրկ համարել ամեն մի իրավական գործունի³⁵:

33 Նայ Եկեղեցու պատմության ողջ ընթացքը ապացուցել է ասվածի հավաստությունը և ապացուցում է նաև այսօր. Ամենայն Նայոց Կաթողիկոսը ժառանգորդ է Նայոց առաջին Լուսավորիչներ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների, գահակալը Նայոց աշխարհում քրիստոնեությունը պետականացնող Ս. Գրիգոր Լուսավորչի Աթոռի և հոգևոր տեսչի՝ եպիսկոպոսն է հայության: Այսպես է նկատվել ողջ միջնադարի ընթացքում: Դեռ ավելին, գերագահ է եղել Աղվանից և Վրաց Աթոռների վրա (միայն է դ. Վրաց Եկեղեցին դառնալով քաղկեդոնադավան դուրս է գալիս Նայոց Եկեղեցու հաղորդությունից, իսկ Աղվանից Եկեղեցին գոյատևում է ընդհուպ մինչև ԺԹ դ. Գանձասարում՝ լիովին հայանալով և հովվելով Նայոց Արևելից Կողմանց հավաքացյալ հոբին): Սա է Նայ Եկեղեցում Ամենայն Նայոց Կաթողիկոս իրավական-կանոնական կարգավիճակը նվիրագործված Ազգային Եկեղեցական ավանդությանը ու հաստատագրված գրավոր մատենագրական վկայություններով:

34 Մեծի Տանն Կիլիկիո Աթոռը 1441 թ. Ամենայն Նայոց Ընդհանրական Կաթողիկոսական Աթոռի Նայաստանում՝ Ս. Էջմիածնում, վերահաստատումից հետո մնաց զուր մասնավոր խորհրդանշական այդ վայրի հարակից շրջանների հայության նկատմամբ: Երուսաղեմի Նայոց պարբիարքական և Կ. Պոլսի Նայոց պարբիարքական Աթոռները եւս իրենց հաստատման օրվանից սկսած, ունեին իրենց վարչատարածքային հսկող սահմաններն ու ըստ այդմ իրավասությանց շրջանակները համապատասխանաբար Երուսաղեմի Նայոց պարբիարքությունը պատմականորեն հաստատված է որպես Ս. Տեղյաց նկատմամբ Նայոց Եկեղեցու իրավապաշտպան ու Նայոց Եկեղեցուն պարականոց տարածքների վերահսկիչ Աթոռ, իսկ Կ. Պոլսի Նայոց պարբիարքությունը որպես Օսմանյան Կայսրությունում Նայոց Եկեղեցու և հայ ժողովրդի ներկայացուցչական կառավարիչ մարմին: Ըստ այդմ էլ այս Աթոռները ենթակա լինելով Ամենայն Նայոց Նայաստանի գերագահ հոգևոր իշխանությանը մասնավոր Աթոռներ են նկատվում, թեև ունեն ինքնավարություն իրենց ներքին կյանքի մեջ:

35 Աղթամարի Կաթողիկոսական Աթոռի հարցում խնդիրն ավելի բարդ է: 1113 թ.-ի ինքնակոչ հաստատումից սկսած մինչև 1441 թ. Աղթամարը եղել է հակաթոռություն, հեղեղաբար վերջինիս աթոռակալների կոնդակներ գուրկ են որևէ կանոնական-իրավական հիմքից ու գործունի: Միայն 1441 թ., երբ Կիրակոս Վիրապեցի հայոց Նայրապետը վերացրեց մինչ այդ Աղթամարի Աթոռի վրա դրված նզովքը, Աղթամարի Աթոռակալները հովվական իրավասություն ստացան միայն Վասպուրականի հայության վրա և ոչ ավելին: [Առավել մանրամասն տես Տ. Ն. Վ. ԱԿԻՆԵԱՆ, Գաղազնագիրք Կաթողիկոսաց աղթամարայ, Վիեննա, 1920, էջ 7-19, 19-32: